# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4

**«Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ»-ի և «Արամե» ՍՊԸ-ի միջև 2025թ. հունիսի 24-ին կնքված N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/3 ծածկագրով «Տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

**ք. Երևան** « 08 » ___09___ **2026թ.**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրեն Սարգիս Բաղինյանի, ով գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ***«Արամե» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Ա. Սարգսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող),*** մյուս կողմից, համատեղ կոչվելով՝ Կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 1869-Ն որոշման առաջին կետի երկրորդ ենթակետի պահանջները, ՀՏԶՀ Ծրագրերի իրականացման և վերահսկողության վարչության զեկուցագիրը և Կողմերի միջև 2025թ. հունիսի 24-ին կնքված ***«ՀՀ Արմավիրի մարզի «Գայի ԲԱ» ՀՈԱԿ-ի կառուցում», «ՀՀ Արմավիրի մարզի «Ջրառատի ԲԱ» ՀՈԱԿ-ի կառուցում», «ՀՀ Արագածոտնի մարզի «Ոսկևազի ԱԱՊԿ» ՀՈԱԿ-ի կառուցում» ծրագրերի շինարարական աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողության*** ծառայությունների մատուցման պետական գնման N ՀՏԶՀ-ԱՏԵԽ-ԽԲՄ-ԾՁԲ-2025/3 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 4.1.1 և 7.5 կետերի դրույթները, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի 4-րդ «ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ» բաժնի 4.1-րդ կետի 1-ին պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ, հետևյալ բովանդակությամբ՝

«4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 24 265 163 (քսանչորս միլիոն երկու հարյուր վաթսունհինգ հազար մեկ հարյուր վաթսուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում՝

**1-ին չափաբաժին**՝ 10 947 036 **(տասը միլիոն ինը հարյուր քառասունյոթ հազար երեսունվեց)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 5 147 036 **(հինգ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար երեսունվեց)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը,**

**2-րդ չափաբաժին**՝ 7 518 127 **(յոթ միլիոն հինգ հարյուր տասնութ հազար մեկ հարյուր քսանյոթ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որից 1 718 127 **(մեկ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար մեկ հարյուր քսանյոթ)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, կազմում է տեղակապվող մասի շինարարական աշխատանքների **ընթացքում տեխնիկական հսկողության ծառայությունների** արժեքը,

**3-րդ չափաբաժին**՝ 5 800 000 **(հինգ միլիոն ութ հարյուր հազար)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնված պարտավորությունների կատարման ավարտը:

2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

3. Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտականությունները թողնվում են անփոփոխ:

4. Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
Կ.Ուլնեցու 31
ՀՎՀՀ՝00846441
Հ/Հ՝
Հաշ. 1՝ 900011058782
Հաշ. 2՝ 900011058790
Կենտրոնական գանձապետարան
Գործադիր տնօրեն
Սարգիս Բաղինյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԱՐԱՄԵ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան,
Ադոնց 6/169
ՀՎՀՀ՝ 08270782
Հ/Հ՝ 1570008306443000
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Տնօրեն՝ Ա.Սարգսյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.